Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թ.
նոյեմբերի 7-ի նիստի N 46
արձանագրային որոշման

(Բանակցված տարբերակ)
Ռոսիո Մալպիկա
2013թ. սեպտեմբերի 17

ՎԱՐԿ ԹԻՎ _____-__

Վարկային համաձայնագիր

(Զարգացման քաղաքականությունների առաջին վարկ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

Առ **201__թ.**

MAR46-22.3

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

201_թ. _____ ___-ի համաձայնագիրը կնքված է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ («Վարկառու») և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ («Բանկ») միջև՝ Ծրագրին աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով (սույն համաձայնագրի հավելվածում սահմանված կարգով): Բանկը որոշել է սույն ֆինանսավորումը տրամադրել ի թիվս այլ հիմքերի՝ ա) սույն Համաձայնագրի 1-ին Ժամանակացույցի I Բաժնում նկարագրված ծրագրի ներքո Վարկառուի կողմից արդեն իրականացված գործողությունների և բ) Վարկառուի կողմից մակրոտնտեսական քաղաքականության համապատասխան դաշտի պահպանման հիման վրա: Սույնով Վարկառուն և Բանկը համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի հավելվածում) կազմում են սույն Համաձայնագրի անբաժան մասը:

1.02. Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, ապա սույն Համաձայնագրում մեծատառով նշված տերմինները կրում են Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի հավելվածում դրանց վերագրված իմաստը:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿ

2.01. Բանկը համաձայնում է սույն Համաձայնագրում սահմանված կամ նշված ժամկետներում և պայմաններին համապատասխան Վարկառուին տրամադրել երեսուն մեկ միլիոն ԱՄՆ դոլար ($31.000.000), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արտարժույթի փոխանակման միջոցով՝ համաձայն սույն Համաձայնագրի («Վարկ») 2.07 մասի դրույթների:

2.02.1. Ծրագրի իրականացման համար Վարկառուն կարող է առհանել վարկային միջոցները՝ համաձայն սույն Համաձայնագրի 1-ին Ժամանակացույցի II Բաժնի դրույթների:

2.02.2. Վարկառուի կողմից վճարման ենթակա սկզբնական կոմիսիոն վճարը հավասար է Վարկի գումարի մեկ տոկոսի քարրորդ մասին (0.25%):

2.04. Վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսագումարը յուրաքանչյուր տոկոսային ժամանակահատվածի համար պետք է համարժեք լինի տեղեկատու դրույքաչափի Վարկի արժույթի բազային արժեքին գումարած փոփոխական սպրեդը՝ հաշվի առնելով, որ վարկի ամբողջ մայր գումարի կամ

դրա մի մասի փոխարկման ժամանակ Վարկառուի կողմից այդ գումարի գծով վճարվող տոկոսագումարը Փոխարկման ժամանակահատվածի ընթացքում պետք է որոշվի համաձայն Ընդհանուր պայմանների IV Հոդվածի դրույթների:

2.05. Վճարման օրերն են յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ը և նոյեմբերի 15-ը:

2.06. Վարկի մայր գումարը պետք է մարվի համաձայն սույն Համաձայնագրի 2-րդ Ժամանակացույցում նշված մարման ժամանակացույցի:

2.07. (ա) Վարկառուն ցանկացած պահի իրավունք ունի պահանջել Վարկի ստորև նշված պայմանների փոփոխություն, որպեսզի ապահովի պարտքի շրջահայաց կառավարումը՝ (i) Վարկի մայր գումարի հանված կամ չհանված ամբողջ կամ մի մասի արժույթի փոխարկում այլ Հաստատված Արժույթի և (ii) տոկոսադրույքի հիմքի փոփոխություն, որը կիրառելի է՝ (Ա) Վարկի առհանված ամբողջ մայր գումարի և դրա մնացորդի կամ ցանկացած մասի նկատմամբ՝ փոփոխական տոկոսադրույքից դեպի ֆիքսված տոկոսադրույք կամ հակառակը, կամ (Բ) Վարկի առհանված ամբողջ մայր գումարի և դրա մնացորդի կամ ցանկացած մասի նկատմամբ՝ տեղեկատու դրույքաչափի և փոփոխական սփրեդի վրա հիմնված փոփոխական տոկոսադրույքից դեպի ֆիքսված տեղեկատու դրույքաչափի և փոփոխական սփրեդի վրա հիմնված ֆիքսված տոկոսադրույք կամ հակառակը, կամ (Գ) Վարկի առհանված ամբողջ մայր գումարի և դրա մնացորդի նկատմամբ՝ փոփոխական սփրեդի վրա հիմնված փոփոխական դրույքաչափից դեպի ֆիքսված սփրեդի վրա հիմնված փոփոխական դրույքաչափ և (iii) Վարկի առհանված ամբողջ մայր գումարի և դրա մնացորդի կամ ցանկացած մասի նկատմամբ կիրառելի փոփոխական դրույքաչափի կամ տեղեկատու դրույքաչափի սահմանաչափերի սահմանում փոփոխական դրույքաչափի կամ տեղեկատու դրույքաչափի նկատմամբ տոկոսադրույքի քեփի կամ փոկոսադրույքի օձիքի սահմանման միջոցով:

(բ) Յուրաքանչյուր փոխարկում, որը կպահանջվի համաձայն սույն բաժնի (ա) կետի, և որը կընդունվի Բանկի կողմից, կհամարվի «Փոխարկում», ինչպես սահմանված է Ընդհանուր Պայմաններում, և պետք է գործադրվի համաձայն Ընդհանուր Պայմանների IV Հոդվածի և Փոխարկման ուղեցույցի դրույթների:

2.08. Առանց Ընդհանուր պայմանների 5.08 Բաժնի (վերահամարակալված է որպես սույն Համաձայնագրի Հավելվածի II Բաժնի պարբերություն 3 և առնչվում է *Համագործակցությանը և խորհրդակցությանը*) դրույթների նկատմամբ սահմանափակումների, Վարկառուն պետք է պատշաճ կերպով Բանկին

տրամադրի սույն II Հոդվածի դրույթներին առնչվող այնպիսի տեղեկություններ, որոնք Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ խելամտորեն պահանջել:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի և դրա իրականացման նկատմամբ իր հանձնառության մասին: Այդ նպատակով և ի լրումն Ընդհանուր պայմանների 5.08 Բաժնի՝

(ա) Վարկառուն և Բանկը պետք է ժամանակ առ ժամանակ կողմերից մեկի խնդրանքով կարծիք փոխանակեն Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի և Ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ,

(բ) նախքան կարծիքների նման փոխանակումը՝ Վարկառուն պետք է Բանկի քննարկմանն ու դիտարկմանը ներկայացնի Ծրագրի իրականացման առաջընթացի մասին զեկույց, որը պետք է լինի այնքան մանրամասն, ինչպես խելամտորեն կպահանջի Բանկը, և,

(գ) առանց սույն Բաժնի (ա) և (բ) մասերի դրույթների մասով սահմանափակման՝ Վարկառուն պետք է Բանկին անմիջապես տեղեկացնի այն իրավիճակների մասին, որոնք կարող են բացասական նյութական ազդեցություն ունենալ Ծրագրի նպատակների վրա, կամ Ծրագրի շրջանակում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում սույն Համաձայնագրի 1-ին Ժամանակացույցի I Բաժնում սահմանված ցանկացած գործողության մասին:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ հիմքերն են՝

(ա) առաջացել է այնպիսի իրավիճակ, որը Ծրագրի կամ դրա զգալի մասի իրականացումը դարձնում է քիչ հավանական:

(բ) Վարկառուն չի կարողացել կատարել Ֆինանսավորման համաձայնագրի ներքո իր պարտավորություններից որևէ մեկը:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԿԱՍԵՑՈՒՄ

5.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանները բաղկացած են հետևյալից, մասնավորապես՝

(ա) Բանկը բավարարված է Վարկառուի կողմից Ծրագրի իրականացման առաջընթացից և Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականությունների դաշտի համապատասխանությունից, և

(բ) Ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել և կատարվել է և դրա ուժի մեջ մտնելու կամ դրա ներքո Վարկառուի կողմից առհանումներ կատարելու իրավունքի համար անհրաժեշտ բոլոր պայմանները (Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելուց բացի) կատարվել են:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո իննսուն (90) օր անց է:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ, ՀԱՍՑԵՆԵՐ

6.01. Վարկառուի ներկայացուցիչը դրա ֆինանսների նախարարն է:

6.02. Վարկառուի հասցեն է՝
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1
ք. Երևան 0010
Հայաստանի Հանրապետություն

Ֆաքս՝

+374-10-524282

6.03. Բանկի հասցեն է՝

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
1818 Հ փողոց, Ն.Վ.
Վաշինգթոն, Կ.Շ. 20433
Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մալուխային հասցե՝	Տելեքս՝	Ֆաքս՝
INTBAFRAD	248423(MCI) or	1-202-477-6391

Washington, D.C. 64145(MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է _____, _____-ում, վերոնշյալ ամսաթվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ **կողմից**
Լիազորված ներկայացուցիչ

Անուն՝ _____

Պաշտոն՝ _____

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

_____ **կողմից**
Լիազորված ներկայացուցիչ

Անուն՝ _____

Պաշտոն՝ _____

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 1

Ծրագրի գործողությունները, վարկային միջոցների հասանելիությունը

Բաժին I. <u>Ծրագրի ներքո նախատեսված գործողությունները:</u> Ծրագրի ներքո Վարկառուի կողմից իրականացված գործողությունները ներառում են հետևյալը՝

Ուղղություն I՝ Մրցունակության ուժեղացում

Տեսչական բարեփոխումներ

1. Վարկառուն միավորել է երկու տեսչություններ (Աշխատանաքի տեսչություն և Համահամաճարակային տեսչություն)՝ նպատակ ունենալով կրճատել տեսչական ստուգումների բեռը ձեռնարկատիրության վրա՝ համաձայն 2013թ. հուլիսի 25-ի կառավարության թիվ 857 որոշման:

Վարկային հաշվետվությունների, գրավի և սնանկության օրենքների բարեփոխումներ

2. Վարկառուն իր Կենտրոնական Բանկի միջոցով իրականացրել է մի շարք միջոցառումներ վարկային ռեգիստրի և հաշվետվությունների համակարգերի բարելավման համար, ներառյալ (i) հատուկ պահանջների ընդունում սպառողական վարկերի վերաբերյալ, որոնց մասին տեղեկացվել են Հայաստանի բոլոր բանկերը և վարկային կազմակերպությունները, (ii) Ֆինանսական համակարգի կայունության և զարգացման սպառողների պաշտպանության բաժնի կանոնադրության փոփոխություն, որը պարզաբանում է նշված բաժնի դերը վարկային հաշվետվությունների հետ կապված հարցերում, (iii) ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրի գործառույթների սահմանափակում սկսած 2014թ. հունվարի 1-ից, (iv) վարկային հաշվետվությունների համակարգի վերահսկողության պարտականությունների պարզաբանում և համախմբում (ա) վերահսկողության, իրավաբանական և ֆինանսական կայունության վարչությունների կանոնադրությունների փոփոխությունների, (բ) սպառողների իրավունքների պաշտպանության բաժնի դերի սահմանման և (գ) «Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովում» բոլոր ֆինանսական հաստատությունների միացյալ վերահսկողության և հարկադրման պատասխանատվության հաստատման միջոցով, համաձայն ՀՀ ԿԲ նախագահի 2013թ. հուլիսի 16-ի թիվ 1/599Ա և 2013թ. օգոստոսի 8-ի թիվ 1/710Լ որոշումների և ՀՀ ԿԲ 2013թ. հուլիսի 4-ի շրջաբերականի:

Քաղաքացիական ծառայության բարեփոխումներ

3. Վարկառուն կառավարության 2013թ. հուլիսի 25-ի նիստում ընդունել է Քաղաքացիական ծառայության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, որն ուղղված է մասնագետների աշխատանքի ընդունման, առաջխաղացման ճկունացմանը և պարբերական ատեստավորումների դադարեցմանը, և 2013թ. օգոստոսի 2-ին այն ներկայացրել է Խորհրդարան:

Օդային կապ

4. Վարկառուն՝ (ա) կառավարության 2013թ. հունիսի 6-ի թիվ 22 արձանագրային որոշման միջոցով ընդունել է ավիացիայի նոր քաղաքականություն, (բ) Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (ՔԱԳՎ) վեբ կայքում հրապարակել է օդային ծառայությունների համաձայնագրերը և համապատասխան փոփոխությունները, նպատակ ունենալով բարձրացնել թափանցիկությունը ավիացիայի ոլորտում և (գ) ավարտել և հրապարակել է օդային տրանսպորտի ոլորտի ազատականացման քաղաքականությունների տարբերակների ուսումնասիրությունը:

Ֆինանսական հատվածի զարգացում

5. Վարկառուն կառավարության 2013թ. օգոստոսի 22-ի նիստում ընդունել է ‹‹Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին›› օրենքի նախագիծ և 2013թ. օգոստոսի 28-ին ներկայացրել է Խորհրդարանի հաստատմանը, իսկ Կենտրոնական Բանկը 2013թ. սեպտեմբերի 9-ին կայացած իր խորհրդի նիստին ընդունել է պարզաբանումներ նշված օրենքի 44-րդ Հոդվածի որոշ դրույթների վերաբերյալ, որպեսզի բարելավվի թոշակային հիմնադրամի ակտիվների կառավարումը:

Ուղղություն II՝ Ֆիսկալ, սոցիալական և բնապահպանական կայունության ուժեղացում

Հարկային եկամուտների մոբիլիզացիա

6. Վարկառուն կառավարության 2013թ. հուլիսի 25-ի թիվ 29 արձանագրային որոշմամբ, կետ 33, ընդունել է (i) ուղեցույց՝ «Հարկային և մաքսային օրենսդրության ռազմավարական սկզբունքների մասին», որը ներառում է հարկային ազատումների և ակցիզային դրույքաչափերի ուսումնասիրություն, նպատակ ունենալով հայտնաբերել եկամուտների հավաքագրման

հնարավորությունները, և (ii) հաստատել է հարկային և մաքսային օրենսդրություններում փոփոխություններ կատարելու միջնաժամկետ ռազմավարությունը:

Սոցիալական օգնություն

7. Վարկառուն կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1859-Ն որոշման միջոցով բարերավել է Ընտանեկան նպաստների ծրագրի հասցեագրման ճշգրտությունը և ծածկույթը՝ հասցեագրման բանաձևի բարելավման միջոցով:

Բնապահպանական կայունության ներդրում հանքարդյունաբերության ոլորտում

8. Վարկառուն իր բնապահպանության նախարարության միջոցով մշակել և ընդունել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենքի նոր նախագիծ՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, և 2013թ. օգոստոսի 2-ին այն ներկայացրել է Խորհրդարանի հաստատմանը:

Բաժին II. <u>Վարկային միջոցների հասանելիությունը</u>

Ա. Ընդհանուր. Վարկառուն կարող է առհանել Վարկի միջոցները համաձայն սույն Բաժնի դրույթների և այնպիսի լրացուցիչ ցուցումների, որոնք Բանկը կարող է սահմանել Վարկառուին ծանուցելու միջոցով:

Բ. Վարկի գումարների հատկացում. Վարկը (բացի սկզբական կոմիսիոն վճարը վճարելու համար պահանջվող գումարներից) հատկացվում է մեկ առհանման տրանշով, որից Վարկառուն կարող է կատարել վարկի միջոցների առհանումներ: Այս նպատակով Վարկի գումարների հատկացումը սահմանված է ստորև բերված աղյուսակում՝

Հատկացումներ	**Հատկացված վարկի գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)**
(1) Մեկ առհանման տրանշ	30,922,500
(2) Սկզբնական կոմիսիոն վճար	77,500
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	31,000,000

Գ. Առհանման տրանշի արձակման պայմաններ

Մեկ առհանման տրանշից որևէ առհանում չպետք է կատարվի մինչև Բանկը բավարարված չլինի՝ ա) Վարկառուի կողմից իրականացվող ծրագրով և բ) Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության դաշտի համապատասխանությամբ:

Դ. Վարկային միջոցների տեղաբաշխում: Եթե Բանկի հետ այլ բան համաձայնեցված չէ, ապա՝

1. Վարկի հաշվից բոլոր առհանումները պետք է հաշվեգրվեն վարկառուի կողմից մատնանշված և Բանկի համար ընդունելի հաշվին, և

2. Վարկառուն պետք է ապահովի, որպեսզի այդ հաշվին Վարկի յուրաքանչյուր հաշվեգրման ժամանակ համարժեք գումար հաշվարկվի Վարկառուի բյուջեի կառավարման համակարգում՝ Բանկի համար ընդունելի եղանակով:

Ե. Բացառված ծախսեր: Վարկառուն պարտավորվում է, որ Վարկի միջոցները չեն օգտագործվի բացառված ծախսերը ֆինանսավորելու համար: Եթե ցանկացած ժամանակ Բանկը հայտնաբերի, որ Վարկի գումարը օգտագործվել է բացառված ծախսերի համար վճարելու նպատակով, Վարկառուն պետք է Բանկի կողմից ծանուցում ստանալուց անմիջապես հետո վերադարձնի Բանկին նման վճարմանը համարժեք գումար: Նման պահանջի դեպքում Բանկին վերադարձված գումարները չեղարկվում են:

Զ. Փակման ամսաթիվ: Փակման ամսաթիվն է 2014թ. մարտի 31-ը:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2

Մարման ժամանակացույց

1. Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Վարկի մայր գումարի վճարման օրերը և Վարկի ընդհանուր մայր գումարի այն տոկոսային մասը («Մասնաբաժինը»), որը պետք է վճարվի Մայր գումարի վճարման յուրաքանչյուր օր: Եթե Մայր գումարի վճարման առաջին օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանվել են, ապա Վարկառուի կողմից մայր գումարի մարման յուրաքանչյուր օրը մարման ենթակա գումարը կորոշվի Բանկի կողմից՝ բազմապատկելով (ա) առաջին վճարման օրվա դրությամբ առհանված վարկային միջոցների մնացորդը (բ) յուրաքանչյուր վճարման օրվա մասնաբաժնով, մարման ենթակա նման գումարը անհրաժեշտության դեպքում կճշգրտվի, որպեսզի դրանից նվազեցվեն բոլոր այն գումարները, որոնց անդրադարձ է կատարված սույն հավելվածի կետ 4-ում, որոնց նկատմամբ կիրառելի է Արտարժույթի փոխարկումը:

Մայր գումարի վճարման ամսաթիվ	**Մասնաբաժին (Արտահայտված որպես տոկոս)**
Յուրաքանչյուր մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին Սկսած 2023թ. նոյեմբերի 15-ից մինչև 2037թ. նոյեմբերի 15-ը	3.33%
2038թ. մայիսի 15-ին	3.43%

2. Եթե առաջին Վճարման օրվա դրությամբ Վարկի գումարները ամբողջովին չեն առհանվել, ապա Վարկառուի կողմից Մայր գումարի վճարման օրը վճարման ենթակա մայր գումարը կորոշվի հետևյալ կերպ՝

(ա) Մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ առհանված վարկային միջոցների մասով, Վարկառուն կմարի առհանված վարկային գումարների մնացորդը այդ օրվա դրությամբ, համաձայն սույն ժամանակացույցի 1-ին կետի:

(բ) Առաջին վճարման օրվանից հետո առհանված ցանկացած գումար պետք է մարվի այդ գումարի առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի վճարման օրը, որի գումարը Բանկի կողմից կորոշվի յուրաքանչյուր նման առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը կլինի սույն ժամանակացույցի կետ 1-ի աղյուսակում նշված մասնաբաժինը տվյալ մայր գումարի մարման օրվա համար («Իրական մասնաբաժին»), իսկ հայտարարը կլինի տվյալ օրվան հաջորդող ամբողջ Մայր գումարի վճարման

օրերի մնացած Մասնաբաժինների գումարը, այսպիսի մարման ենթակա գումարները անհրաժեշտության դեպքում պետք է ճշգրտվեն, որպեսզի նվազեցվեն բոլոր այն գումարները, որոնց անդրադարձ է կատարվում սույն ժամանակացույցի կետ 4-ում, որոնց նկատմամբ կիրառելի է Արտարժույթի Փոխարկումը:

3. (ա) Յուրաքանչյուր Մայր գումարի վճարման օրվան նախորդող երկու օրացուցային ամիսների ընթացքում առհանված գումարները միայն յուրաքանչյուր Մայր գումարի վճարման օրվա դրությամբ վճարման ենթակա գումարները հաշվարկելու նպատակով կհամարվեն առհանված և չմարված գումարներ ստացման օրվան հաջորդող Մայր գումարի վճարման երկրորդ օրվա դրությամբ, և մարման ենթակա կլինեն Մայր գումարի վճարման յուրաքանչյուր այն օրվա դրությամբ, որը կսկսի ստացման օրվան հաջորդող Մայր գումարի վճարման երկրորդ օրը:

(բ) Չնայած սույն կետի «ա» ենթակետի դրույթներին, եթե ցանկացած ժամանակ Բանկը որդեգրի վճարման օրվա դրությամբ պարտավորությունների կատարման համակարգը, որի ժամանակ հաշիվ-ապրանքագրերը թողարկվում են Մայր գումարի վճարման համապատասխան օրը կամ դրանից հետո, ապա այդ ենթակետի դրույթները չեն վերաբերի նշված համակարգի ներդրումից հետո կատարված վճարումներին:

4. Չնայած սույն ժամանակացույցի 1 և 2 կետերի դրույթներին, Վարկի Օգտագործված մնացորդի ամբողջ գումարի կամ դրա մի մասի՝ Հաստատված արտարժույթի փոխարկումից հետո, Փոխարկման ժամանակահատվածից հետո Մայր գումարի մարման օրը վճարման ենթակա Հաստատված արտարժույթի փոխարկված գումարը կորոշվի Բանկի կողմից նման գումարը փոխարկումից անմիջապես առաջ իր հատկացման արժույթով բազմապատկելով կամ՝ 1) փոխարժեքով, որը կարտացոլի Բանկի կողմից Արժույթի հեդջավորման գործարքի սահմաններում վճարման ենթակա մայր գումարը Հաստատված փոխարժեքով, կամ 2) եթե Փոխարկման ուղենիշներին համաձայն Բանկը որոշի այդպես, սքրին դրույքաչափի փոխարժեքի բաղադրիչով:

5. Եթե վարկի առհանված մնացորդը նշված է ավելի քան մեկ վարկային արժույթով, ապա այս Ժամանակացույցի դրույթները առանձին կիրառվում են յուրաքանչյուր վարկային արժույթով նշված գումարի նկատմամբ, որպեսզի յուրաքանչյուր նման գումարի համար ստացվի մարման առանձին ժամանակացույց:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բաժին I. Սահմանումներ

1. «Բացառված ծախսեր» նշանակում է ցանկացած ծախսեր՝

(ա) ապրանքների և ծառայությունների համար, որոնք իրականացվում են պայմանագրի շրջանակում, որը ֆինանսավորել է կամ համաձայնել է ֆինանսավորել Բանկից և Ընկերակցությունից բացի այլ ազգային կամ միջազգային ֆինանսավորող հաստատություն կամ գործակալություն կամ, որը Բանկը կամ Ընկերակցությունը ֆինանսավորել կամ համաձայնել է ֆինանսավորել այլ վարկի, վարկի կամ դրամաշնորհի շրջանակում,

(բ) Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից վիճակագրական փաստաթղթերում հրապարակված (սերիա M, No. 34/Rev.3 (1986) (SITC)) Առևտրի միջազգային ստանդարտ դասակարգման 3-րդ փոփոխության (SITC, Rev.3) հետևյալ խմբերում կամ ենթախմբերում կամ SITC-ի հետագա փոփոխությունների հաջորդ խմբերում կամ ենթախմբերում ներառված ապրանքների համար՝ Բանկի կողմից Վարկառուին ծանուցմամբ նշված կարգով՝

Խումբ	Ենթախումբ	Ապրանքի նկարագրություն
112		Ոգելից խմիչքներ
121		Ծխախոտ՝ չմշակված: ծխախոտի մնացորդներ
122		Ծխախոտ՝ մշակված (անկախ ծխախոտի փոխարինիչներ պարունակելուց)
525		Ռադիոակտիվ և հարակից նյութեր
667		Մարգարիտներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ մշակված և չմշակված
718	718.7	Միջուկային ռեակտորներ և դրանց մասեր, վառելիքի տարրեր (քարթրիջներ)՝

		չճառագայթված, միջուկային ռեակտորների համար
728	728.43	Ծխախոտի մշակման սարքեր
897	897.3	Ոսկու, արծաթի կամ պլատինի խմբի մետաղյա զարդեր (բացի ձեռքի ժամացույցներից և ժամացույցի պատյաններից) և ոսկյա և արծաթե իրեր (այդ թվում՝ թանկարժեք դեկորատիվ քարեր)
971		Ոսկի՝ ոչ գումարային (բացառությամբ ոսկու հանքերի և կոնցենտրատների)

(գ) ռազմական կամ ռազմականացված նպատակների համար նախատեսված ապրանքների կամ շքեղ սպառման համար,

(դ) շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը կամ ներմուծումը արգելված են Վարկառուի օրենքով կամ միջազգային համաձայնագրերով, որոնց Վարկառուն միացել է,

(ե) Միավորված Ազգերի Կազմակերպության խառտիայի Գլուխ VII-ի շրջանակում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշմամբ արգելված վճարման հետևանքով, և

(զ) որոնց կապակցությամբ Բանկը հայտնաբերում է, որ Վարկառուի կամ վարկային միջոցները ստացող այլ անձի ներկայացուցիչների կողմից կիրառվել են կոռումպացված, կեղծ, գաղտնի համաձայնեցված կամ հարկադիր միջոցներ, որոնց առնչությամբ Վարկառուն (կամ այլ նման ստացող) չի ձեռնարկել ժամանակին և պատշաճ քայլեր, որոնք կբավարարեին Բանկին՝ այդ դրսևորումները լուծելու համար:

2. «Ֆինանսավորման համաձայնագիրը» Վարկառուի և Ընկերակցության միջև Ծրագրի համար կնքված համաձայնագիրն է, որի ամսաթիվը նույնն է, ինչ այս Համաձայնագրինը. որպես այդպիսին համաձայնագիրը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել: «Ֆինանսավորման համաձայնագիրը» ներառում է

բոլոր հավելվածները, ժամանակացույցները և համաձայնագրերը, որոնք լրացնում են Ֆինանսավորման համաձայնագիրը:

3. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է 2012թ. մարտի 12-ի «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները վարկի համար»՝ սույն Հավելվածի Մաս II-ում ներկայացված փոփոխություններով:

4. «Ծրագիր» նշանակում է գործողությունների, նպատակների և քաղաքականությունների ծրագիր, որը նախագծվել է աճը խթանելու ու աղքատության կայուն կրճատման հասնելու նպատակով և, որը սահմանված է կամ հիշատակված է 2013թ. սեպտեմբերի 12-ին Վարկառուից Բանկին ուղարկված գրության մեջ, որտեղ հայտարարվում է Ծրագիրն իրականացնելու Վարկառուի պատրաստակամության մասին և Բանկից աջակցություն է խնդրվում Ծրագրի համար՝ դրա իրականացման ընթացքում:

5. «Մեկ առհանման տրանշ» նշանակում է սույն Համաձայնագրի 1-ին Ժամանակացույցի Բաժին II-ի «Բ» մասի աղյուսակի «Մեկ առհանման տրանշ» կոչվող կատեգորիային հատկացված Վարկի գումարը:

Բաժին II. Ընդհանուր պայմանների փոփոխություններ

Ընդհանուր պայմանների փոփոխությունները հետևյալն են՝

1. 2.03 բաժնի «ա» կետում վերջին նախադասությունը (Առհանման հայտերի վերաբերյալ) ամբողջությամբ հանված է:

2. 2.04 (*Համապատասխան հաշիվներ*) և 2.05 (*Ընդունելի ծախսեր*) բաժիններն ամբողջությամբ հանվել են, իսկ II Հոդվածի մնացած բաժինների համարակալումը համապատասխանաբար փոխվել է:

3. 5.01 (*Ծրագրի ընդհանուր կատարում*) և 5.09 (*Ֆինանսական կառավարում, Ֆինանսական քաղվածքներ, աուդիտներ*) բաժիններն ամբողջությամբ հանվել են, իսկ V հոդվածի մնացած բաժինների համարակալումը համապատասխանաբար փոխվել է:

4. 5.05 բաժնի (ա) կետը (այդպիսի համարակալումը կատարված է վերը նշված 3-րդ կետի համաձայն և վերաբերում է *Ապրանքների օգտագործում, Աշխատանքներ և ծառայություններ* բաժնին) ամբողջությամբ հանվել է:

5. 5.06 բաժնի (գ) կետը (այդպիսի համարակալումը կատարված է վերը նշված 3-րդ կետի համաձայն) խմբագրվել հետևյալ կերպ՝

«Բաժին 5.06՝ *Պլաններ, փաստաթղթեր, գրառումներ*

... (գ) Փոխառուն պետք է պահպանի Վարկի շրջանակներում կատարված ծախսերի մասին վկայող բոլոր գրառումները (պայմանագրեր, հրամաններ, ապրանքագրեր, հաշիվներ, ստացականներ և այլ փաստաթղթեր)՝ Փակման օրվանից երկու տարվա ընթացքում: Վարկառուն պետք է Բանկի ներկայացուցիչներին հնարավորություն տա ուսումնասիրել այդ գրառումները:»

6. 5.07 բաժնի «գ» կետը (այդպիսի համարակալումը կատարված է վերը նշված 3-րդ կետի համաձայն) խմբագրվել հետևյալ կերպ՝

Բաժին 5.07. *Ծրագրի մշտադիտարկում և գնահատում*

... (գ) Փակման օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս հետո Վարկառուն պետք է պատրաստի կամ պատվիրի պատրաստել և Բանկին տրամադրի հաշվետվություն՝ ծրագրի իրականացման, Իրավական համաձայնագրերի և Վարկի նպատակների իրականացման շրջանակներում Վարկի կողմերի և Բանկի կողմից իրենց պարտականությունների կատարման վերաբերյալ՝ այնպիսի ծավալով և այնքան մանրամասն, ինչպես Բանկը խելամտորեն կպահանջի:

6. Հավելվածում ներկայացված հետևյալ տերմինները և սահմանումները փոփոխվել կամ հանվել են հետևյալ կերպ, իսկ հետևյալ նոր տերմինները և սահմանումները այբբենական կարգով ավելացվել են Հավելվածում, և տերմինները համապատասխանաբար վերահամարակալվել են՝

(ա) «Թույլատրելի ծախս» տերմինի սահմանումը խմբագրվել է հետևյալ կերպ՝

««Թույլատրելի ծախս» նշանակում է Ծրագրի իրականացմանը նպաստելու նպատակով Վարկի ցանկացած օգտագործում, բացի Վարկային համաձայնագրով բացառված ֆինանսական ծախսերից:»

(բ) «Ֆինանսական հաշվետվություններ» տերմինը և դրա սահմանումն ամբողջությամբ հանվել են:

(գ) «Նախագիծ» տերմինը փոխարինվել է «Ծրագիր» տերմինով և դրա սահմանումը խմբագրվել է հետևյալ կերպ (իսկ «Նախագիծ» տերմինի

բոլոր հիշատակումները այս Ընդհանուր պայմաններում համարվում են հղում «Ծրագիր» տերմինին)՝

««Ծրագիր» նշանակում այն ծրագիրը, որը հիշատակված է Վարկային համաձայնագրում, որի իրականացմանը նպաստելու համար տրամադրվել է Վարկը»: